Վերոգրյալների հիման վրա Դատարանը եզրահանգում է, որ «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «ԼԵՅԿՈ» ՍՊ ընկերության ենթակա է բռնագանձման նաև 200,000.00 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության ծախս:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ԼԵՅԿՈ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 7-րդ կետը մասնակի, այն է՝ 44, 45 և 46 չափաբաժինների մասով «ԼԵՅԿՈ» ՍՊ ընկերությանը հաղթող ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

«ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 7-րդ կետը մասնակի, այն է՝ 44, 45 և 46 չափաբաժինների մասով «ԼԵՅԿՈ» ՍՊ ընկերությանը հաղթող ճանաչելու մասով, ճանաչել անվավեր:

«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «ԼԵՅԿՈ» ՍՊ ընկերության բռնագանձել 100,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից հօգուտ «ԼԵՅԿՈ» ՍՊ ընկերության բռնագանձել 200,000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված փորձաքննության ծախս:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

<u>Ծանոթություն</u>: վճիռը մտել է օրինական ուժի մեջ
« » _____ 2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ